

## ՀԱՐՑՈՒՄ

### Համակարգչային սարքավորման մատակարարման համար գնանշման մասին

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն, որը գտնվում է 0010, ք. Երևան, Մ.Խորենացի 15 հասցեում (Պատվիրատու), իրականացնում է գնանշման հարցում՝ QNAP TDS-16489U տեսակի սարքավորում գնելու նպատակով:

Սարքավորումը պետք է ունենա

- 16 կոշտ սկավառակ տեղադրված QNAP-ում՝ յուրաքանչյուրը 6 TB, 7200 RPM և ավելի,
- 6 կոշտ սկավառակ՝ յուրաքանչյուրը 6 TB, 7200 RPM և ավելի:

Գնանշման հարցմանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները, որոնք պետք է ներկայացնեն արտադրողի կողմից տվյալ մատակարարումն իրականացնելու համար հավաստագրում ստանալու վերաբերյալ փաստաթուղթ (Manufacturer Authorization Form), որը պետք է գործի մրցույթի անցկացման և մատակարարման իրականացման ամբողջ ժամանակահատվածում:

Մասնակիցը ներկայացնում է հայտ, որում նշվում է սարքավորման

- գինը՝ ներառյալ ԱԱՀ և մատակարարման արժեքը մինչև Պատվիրատուի գրասենյակ (ք. Երևան, Մ.Խորենացի 15),
- վճարման պայմանները, մատակարարման ժամկետները,
- երաշխիքային (սպասարկման) ժամկետը և պայմանները

Մասնակիցները առաջարկները կարող են ներկայացնել [arca@arca.am](mailto:arca@arca.am) էլեկտրոնային հասցեով:

Մասնակիցները ներկայացնում են առաջարկ, որի գործողության ժամկետը պետք է կազմի գնանշման առաջարկների ուղարկման օրվանից սկսած 20 օրից ոչ պակաս:

Պատվիրատուն իրավունք ունի մինչև առաջարկներն ամփոփելը ցանկացած պահին դադարեցնել ընտրության անցկացումը և հրաժարվել բոլոր ստացած հայտերից՝ առանց որևէ պարգաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև:

Գնման առաջարկները կարող են ներկայացվել մինչև 14.06.2019թ. -ը, ժամը 17.00-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել

+374 10 592211 ներք.160 կամ գրել [Hmayak.Petrosyan@arca.am](mailto:Hmayak.Petrosyan@arca.am)

